**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԻԶԻՆԳՈՎ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ, ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՎԱՐԺԱՍԱՐՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N «ԲՄԼԶԲ-2026/2-ԵՊԲՀ»**

ք. Երևան «30» 04 2026թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գույքի վերջնական օգտագործող կամ Լիզինգառու), մի կողմից, «ԱՐ.ՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Վ. Թորոսյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) և **«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն**, ի դեմս գլխավոր տնօրեն **Ա. Գասպարյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ-Լիզինգատու), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Լիզինգառուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Լիզինգառուն պարտավորվում է ընդունել ապրանքը, իսկ Գնորդ-Լիզինգատուն պարտավորվում է վճարել դրա համար Վաճառողին:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդ-Լիզինգատուն և/կամ Լիզինգառուն իրավունք ունեն՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդ-Լիզինգատուի և Լիզինգառուի երկկողմ գրավոր համաձայնության դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տասը) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Լիզինգառուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Գնորդ-Լիզինգատուի և Լիզինգառուի երկկողմ գրավոր համաձայնության դեպքում լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Լիզինգառուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Լիզինգառուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդ-Լիզինգատուն հրաժարվի սույն պայմանագրով և իրավերով նախատեսված պայմաններով Լիզինգի պայմանագրի կնքումից կամ առաջադրի այլ պայմաններ Լիզինգի պայմանագրի կնքման համար:

**2.2 Լիզինգառուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն պահից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.4 Պայմանագրի 2.4.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Գնորդ-Լիզինգատուն պարտավոր է՝**

2.3.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Վաճառողն իրավունք ունի՝**

2.4.1 Լիզինգառուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.4.2 Գնորդ-Լիզինգատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Լիզինգառուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.4.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդ-Լիզինգատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.4.3.1 Գնորդ-Լիզինգատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.4.4 Գնորդ-Լիզինգատուի և/կամ Լիզինգառուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.5 Վաճառողը պարտավոր է՝**

2.5.1 Գնորդ-Լիզինգատուին և/կամ Լիզինգառուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.5.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդ-Լիզինգատուի և/կամ Լիզինգառուի կողմից սահմանված ժամկետներում:

2.5.3 Գնորդ-Լիզինգատուին և/կամ Լիզինգառուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.5.4 Գնորդ-Լիզինգատուին և/կամ Լիզինգառուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդ-Լիզինգատուի և/կամ Լիզինգառուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.5.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.5.6 Հետ տանել Գնորդ-Լիզինգատուի և/կամ Լիզինգառուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.5.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.5.8 Գնորդ-Լիզինգատուին և/կամ Լիզինգառուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.5.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո թե՛ Գնորդ-Լիզինգատուին, թե՛ Լիզինգառուին հատուցել վերջիններիցս յուրաքանչյուրին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.5.10 Պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել թե՛ Գնորդ-Լիզինգատուին, թե՛ Լիզինգառուին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **231480000 (երկու հարյուր երեսունմեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի և (կամ) Գնորդ-Լիզինգատուի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը, լիզինգի պայմանագրի արժեքը:

Ապրանքի (Լիզիզնգի առարկայի) մատակարարման գինը կայուն է, և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Լիզինգառուն նվազեցնելու այդ գինը, իսկ կնքվելիք լիզինգի պայմանագրի գինը գործոնային՝ տոկոսադրույքի և ապահովագրավճարի մասով՝ ընդ որում գինը (Պայմանագրով և Լրացուցիչ պայմանագրով սահմանված տոկոսադրույքները) կարող է փոփոխվել ֆինանսական շուկայում Լիզինգատուի կողմից ներգրավված և տեղաբաշխված միջոցների և տոկոսադրույքների տատանումների և/կամ ֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման և/կամ նման նախադրյալների առկայության դեպքում՝ մինչև 4 տոկոսային կետով՝ բայց ոչ ավել, քան ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված լիզինգի առավելագույն տոկոսադրույքը: Տվյալ դեպքում Գնորդ-Լիզինգատուն այդ մասին առնվազն 30 օրացուցային օր առաջ ծանուցում է Լիզինգառուին, իսկ փոփոխությունները կարող են կիրառվել՝ ծանուցման մեջ նշված ամսաթվից սկսած, փոփոխության մասին կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև **36696000 (երեսունվեց միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամը**, Լիզինգառուն փոխանցում է Գնորդ-Լիզինգատուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

3.3 Գնորդ-Լիզինգատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով:

Լիզինգառուն իրեն հանձնված ապրանքի ժամանակավոր օգտագործման և տիրապետման դիմաց Գնորդ-Լիզինգատուին վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Լիզինգատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն կնքվելիք լիզինգի պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող վճարման ժամանակացույցի: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև 2030 թվականի դեկտեմբերի 25-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Լիզինգառուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդ-Լիզինգատուի և/կամ Լիզինգառուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:**

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդ-Լիզինգատուի ներկայացուցչի, և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդ-Լիզինգատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Լիզինգառուի ներկայացուցչի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում, Գնորդ-Լիզինգատուի ներկայացուցիչը պետք է լինի Լիզինգառուն կամ վերջինիս ներկայացուցիչը: Սույն դեպքում ապրանքի հանձնման-ընդունման ակտի կնքման պահից ապրանքը համարվում է Գնորդ-Լիզինգատուի կողմից Լիզինգառուի ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը հանձնված:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդ-Լիզինգատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդ-Լիզինգատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

Ընդ որում, Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Լիզինգառուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Լիզինգառուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդ-Լիզինգատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Լիզինգառուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Լիզինգառուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հօգուտ Լիզինգառուի գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից հօգուտ Լիզինգառուի գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Լիզինգառուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդ-Լիզինգատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդ-Լիզինգատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն գլխի դրույթները կիրառման ենթակա չեն Լիզինգառուի և Գնորդ-Լիզինգատուի միջև պայմանագրային իրավահարաբերությունների նկատմամբ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագիրը կնքվելուց հետո Գնորդ-Լիզինգատուի և Լիզինգառուի միջև կկնքվի լիզինգի պայմանագիր, որով կարգավորվերու են լիզինգին վերաբերվող մի շարք առանձնահատուկ պայմաններ:**

8.2 Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդ-Լիզինգատուն և Լիզինգառուն լուծում են պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդ-Լիզինգատուն և Լիզինգառուն չեն կրում պայմանագրի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդ-Լիզինգատուի և Լիզինգառուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը, բացառությամբ այն դեպքի, երբ Վաճառողը ամբողջությամբ կատարել է իր կողմից պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Լիզինգառուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ-Լիզինգատու կամ Լիզինգառու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի և (կամ) Գնորդ-Լիզինգատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Լիզինգառուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը և (կամ) Գնորդ-Լիզինգատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Լիզինգառուն այն ուղարկում է նաև Վաճառողի և (կամ) Գնորդ-Լիզինգատուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 **(տասներկու)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով Լիզինգառուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Լիզինգառուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կամ Գնորդ-Լիզինգատուի կամ միաժամանակ երկուսի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը և (կամ) Գնորդ-Լիզինգատուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Լիզինգառուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 **աշխատանքային օրվա** ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Լիզինգառուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| «ԼԻԶԻՆԳԱՌՈՒ» | «ՎԱՃԱՌՈՂ» | «ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ» |
|---|---|---|
| «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ | «ԱՐ.ՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ | «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ |
| ք. Երևան, 0025, Կորյունի 2 | ք. Երևան, 0025, Հերացի փողոց 7 | ք. Երևան, 0078, Ֆուչիկի 1/1 |
| «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ | «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հ/Հ 11500166513800 | Հ/Հ 1930041595160100 | Հ/Հ 220009620224000 |
| ՀՎՀՀ 01503448 | ՀՎՀՀ 02604367 | ՀՎՀՀ 02567702 |
| | էլ. հասցեն armedtechnicallc@gmail.com | |
| | Հեռ. (+37410) 56-99-99 | |
| | | Գլխավոր տնօրեն՝ |
| Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան | Տնօրեն՝ Վ. Թորոսյան | Ա. Գասպարյան |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 1**
**«30» «04» 2026թ. կնքված**
**N «ԲՄԼՋԲ-2026/2-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը և մոդելը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 65321100 | Լիզինգով ստոմատոլոգիական բազմաֆունկցիոնալ վարժասարքերի ժամանակավոր տիրապետում և շահագործում՝ պայմանագրի ավարտից հետո Պատվիրատուի սեփականությանն անցնելու պայմանով | UMG կամ Jingle Medical, UMG-B կամ JG-A15 | Կից ներկայացվում է* | դրամ | 231480000 | 231480000 | 1 | ք. Երևան. Էզրաս Հասրաթյան 9/1 | - | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու և լիզինգի պայմանագիր կնքելու օրվանից սկսած՝ 120 օրացուցային օրվա ընթացքում |

*Թվով 132 հատ շարժական ատամնաբուժական վարժասարքեր:

Վարժասարքերը նախատեսված են ատամնաբուժական պրոցեդուրաների ուսուցման և կատարման համար՝ առաջարկելով իրատեսական մոդելավորման կամ պրակտիկայի համար նախատեսված լիարժեք հնարավորություններ: Շարժական վարժասարքի հիմնական իրանի չափսերը՝ բարձրությունը՝ 870մմ±10%, խորությունը՝ 520մմ±10%, լայնությունը՝ 465մմ ±10%: Ընդհանուր բարձրությունը՝ շարժական սարքի ստորին մասից մինչև լուսարձակի վերին մասը՝ 1690մմ±10%, ինչը այն դարձնում է կոմպակտ և շարժական սարք: Ֆանտոմի չափսը առավելագույն բացված վիճակում՝ 1080մմ ±10% է:

**Ֆանտոմային գլուխ:**

Ֆանտոմային գլուխն առաջարկում է շարժման լայն շրջանակ ոչ պակաս, քան՝ 0-90 աստիճան առաջ և ետ թեքությամբ և 600-700 մմ ուղղահայաց կարգավորմամբ: Համատեղելի է Nissin ատամնային մոդելների հետ և ներառում է 32 ատամնանոց փափուկ լնդային մոդել, որը կարող է ամրացվել պտուտակով: Ունի դեմքի դիմակ՝ ջրահեռացմամբ, մոխրագույն կամ համարժեք այլ գույնի գլխակալ և մեջքի հենակ՝ իրատեսական դիրքավորման համար: Ֆանտոմային գլուխը կարող է բարձրացվել և թեքվել անմիջապես գործիքների սկուտեղից, որը նաև ունի երկու ազատ ծրագրավորվող հիշողության դիրքեր և վերագործարկման կոճակ: Ունի 2 ռետինե խողովակ M4 ստանդարտի գլխիկով՝ հագեցած տուրբինային, անկյունային, ուղիղ ծայրակալներով և օդային միկրոշարժիչով: Հագեցած է եռալիք (օդ/ջուր/ցող) ներարկիչով և թույլ ներծծմամբ՝ թքի արտանետիչով: Գործիքների սկուտեղով շարժական մոդուլը պատրաստված է մետաղից և պլաստիկից: Բազաֆունկցիոնալ ոտքի կառավարիչը ապահովում է հիմնական գործառույթների անհպում կառավարում: Ծայրակալների աշխատանքը ակտիվանում է ոտքի կարգավորիչը սեղմելիս: Բաց թողնելիս դադարում է աշխատել: Ոտքի կարգավորիչը առաջ սեղմելիս ֆանտոմ գլուխը բարձրանում է: Հետ սեղմելիս իջնում է: Ձախ սեղմելիս շարժվում է հետ, իսկ աջ սեղմելիս՝ առաջ: Ունի սենսորով լուսադիոդային լամպ: Էներգիայի սպառում ոչ ավել, քան՝ 15 ՎԱ: Լույսի ինտենսիվություն. Կարգավորելի՝ 8000-ից մինչև 20000/22000 լյուքս: Լույսի կետի չափս. 80 x 160 մմ: Գույնի ջերմաստիճան ոչ պակաս, քան՝ 6000K: Փոխազդեցության միջակայք՝ 20-80մմ:

**Ատամնաբուժական աթոռ:**

Տեսակ՝ մետաղական հիմք, գույնը՝ մոխրագույն կամ համարժեք գույնի: Բեռնունակություն՝ 135 կգ-ից ոչ պակաս: Մեջքի հենակը և բարձը կարող են պտտվել, իսկ նստատեղի բարձրությունը կարգավորվում է գազային բարձրացման միջոցով: Չափսեր՝ մեջքի հենակի բարձրությունը՝ 200-250 մմ, նստատեղի բարձրությունը՝ 450մմ ±5%: Ջրամատակարարման

համակարգ՝ ներառում է մաքուր ջրի համար նախատեսված շիշ և կեղտաջրերի համար նախատեսված շիշ: Հնարավոր է նաև միացնել քաղաքային ջրամատակարար և ջրահեռացման խողովակին: Ապրանքը նոր է, չօգտագործված: Երաշխիքային ժամկետ՝ 12 ամիս՝ տեղադրման և կարգաբերման պահից սկսած:

Տեղափոխումը, տեղադրումը, ուսուցումը և կարգաբերումը Վաճառողի կողմից և իր միջոցներով:

**Պայմանագրի կատարման փուլում, պայմանագրով սահմանված ողջ խմբաքանակի համար ապրանքի մատակարարումն իրականացվելու է պայմանագրով սահմանված ապրանքային նշաններից և դրանց համապատասխանող մոդելներից միայն մեկով՝ ըստ Վաճառողի ընտրության:**

Լիզինգի պայմաններ.

- Մարման ժամկետ՝ մինչև 42 ամիս.
- Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 13.5 %, որից 8 տոկոսային միավորը սուբսիդավորվում է ՀՀ կառավարության կողմից.
- Կանխավճար՝ առաջարկած լիզինգի առարկայի գնի 20 %-ի չափով.
- Առանց պայմանագրի կնքման միանվագ միջնորդավճարի.
- Լիզինգի առարկայի ապահովագրություն լիզինգի ամբողջ ժամանակահատվածում հոգում է «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն.
- Մարումները աննուիտետային, ամսական.
- Լիզինգի ժամկետը լրանալուց հետո, կամ մինչև դրա լրանալը՝ եթե Լիզինգառուն վաղաժամկետ կատարել է բոլոր վճարումները, Լիզինգի առարկան անցնում է Լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու պայմանով, պայմանագրային պարտավորության վաղաժամկետ մարումը չի առաջացնում բացասական հետևանքներ (տույժ և տուգանքներ):

«ԼԻԶԻՆԳԱՌՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, 0025, Կորյունի 2
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ԱՐ.ՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ
ք. Երևան, 0025,
Հերացի փողոց 7
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367
էլ. հասցեն
armedtechnicallc@gmail.com
Հեռ. (+37410) 56-99-99

Տնօրեն՝ Վ. Թորոսյան

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ»
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ
ք. Երևան, 0078, Ֆուչիկի 1/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220009620224000
ՀՎՀՀ 02567702

Գլխավոր տնօրեն՝
Ա. Գասպարյան

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
«30» «04» 2026թ. կնքված
N «ԲՄԼՁԲ-2026/2-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 65321100 | Լիզինգով ստոմատոլոգիական բազմաֆունկցիոնալ վարժասարքերի ժամանակավոր տիրապետում և շահագործում՝ պայմանագրի ավարտից հետո Պատվիրատուի սեփականությանն անցնելու պայմանով | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**Պայմանագրում գումարները նշվում են տոկոսով, իսկ համաձայնագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:

«ԼԻԶԻՆԳԱՌՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, 0025, Կորյունի 2
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա. Մուրադյան
_______________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ԱՐ.ՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ
ք. Երևան, 0025,
Հերացի փողոց 7
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367
էլ. հասցեն
armedtechnicallc@gmail.com
Հեռ. (+37410) 56-99-99
Տնօրեն՝ Վ. Թորոսյան
_______________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ»
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ
ք. Երևան, 0078, Ֆուչիկի 1/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220009620224000
ՀՎՀՀ 02567702
Գլխավոր տնօրեն
Ա. Գասպարյան
_______________
(ստորագրությունը)
Կ.Տ

*Հավելված N 3*
*«      »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
___________________________
___________________________
գտնվելու վայրը ____________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու
___________________________
___________________________
գտնվելու վայրը ____________
հհ__________________________
հվհհ________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »      «                    » 20      թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
___________________________
ստորագրություն
___________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
___________________________
ստորագրություն
___________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »      20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20   թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«      »         20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ________________________-ի միջև «--»    20  թ. կնքված
գնորդի անվանումը    վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի  միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________________    ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»    20  թ.